ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման V նստաշրջանի արդյունքների մասին (07.02.05թ. - 26.05.05թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման հինգերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 1 եռօրյա և 5 չորսօրյա նիստ: Նստաշրջանի ընթացքում (մայիսի 17-ին) և հետո (հուլիսի 6-ին) ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարվել են նաև 2 արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էին 69 հարց, որը հետագայում լրացվեց ևս 59-ով: Նստաշրջանի օրակարգի 128 հարցերից 67-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններ էին, 50-ը՝ Ազգային ժողովի պատգամավորներինը, 2-ը՝ ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 9-ը ՀՀ օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր, որից 1-ը՝ ՀՀ Նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձված «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն էր:

ՀՀ կառավարության 67 օրենքների նախագծերից 26-ը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի ընթացքում 119 օրենքների նախագծերից քննարկվել են 51-ը, որոնցից 8-ը ընդունվել են երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (6-ը կառավարության, 2-ը՝ պատգամավորների), 24-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (15-ը կառավարության, 9-ը՝ ԱԺ պատգամավորների), 6-ը՝ երկրորդ ընթերցմամբ (ՀՀ կառավարության) և 12-ը՝ առաջին ընթերցմամբ (4-ը կառավարության, 6-ը՝ ԱԺ պատգամավորների, իսկ 2-ը ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր), ՀՀ կառավարության նախաձեռնած 1 օրենքի նախագծի ընդունումը հերթական ընթերցմամբ մերժվել է Ազգային ժողովի կողմից: Այն է՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ազգային ժողովը քվեարկությամբ չորսօրյա նիստերի օրակարգ չընդգրկեց նաև 11 օրենսդրական նախաձեռնություններ (8-ը կառավարության, 3-ը՝ պատգամավորների)՝

1. «Բնապահպանական վերահսկողության մասին» (երկրորդ ընթերցում) ՀՀ օրենքի նախագիծը,
2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին (երկրորդ ընթերցում) ՀՀ օրենքի նախագիծը,
3. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

4. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

5. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

6. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

7. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

8. «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

9. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

10. «Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

11. «Հայխնայբանկում» ավանդադրված խնայողությունների վերականգնման և մարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Շրջանառությունից հանվեցին 4 օրենքների նախագծեր (3-ը կառավարության, 1-ը՝ պատգամավորների)՝

1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **(ՀՀ կառավարություն),**
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»

(ՀՀ ԱԺ պատգամավոր Կ. Կարապետյան),

3. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ

(ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Սադոյան),

4. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ **(ՀՀ ԱԺ պատգամավորներ Գ. Արսենյան, Գ. Ղոնջեյան, Մ. Պետրոսյան, Հ. Ավետիսյան և ուրիշներ):**

Ամբողջությամբ ընդունված 32 օրենքներից 21-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 11-ը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներինը:

32 օրենքներից 8-ը մայր օրենքներ էին (6-ը՝ ՀՀ կառավարության, 2-ը՝ ԱԺ պատգամավորների, իսկ 24-ը փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում (15-ը՝ ՀՀ կառավարության, 9-ը՝ ԱԺ-ի պատգամավորների):

Ամբողջությամբ ընդունված 32 օրենքներից 10-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 9-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 4-ը՝ իրավական դաշտից են, 5-ը վերաբերում են գիտական, կրթական և մշակութային ոլորտներին, 4-ը՝ երկրի պաշտպանությանը և ազգային անվտանգությանը:

Ամբողջությամբ ընդունվեցին նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 2 օրենքների նախագծեր (1-ը ՀՀ կառավարության, 1-ը ԱԺ-ի պատգամավորների):

Նախորդ նստաշրջանի ընթացքում I կամ II ընթերցմամբ ընդունվել և գարնանային նստաշրջան էին տեղափոխվել 14 նախագծեր, որոնցից 10-ը ԱԺ-ի III գումարման V նստաշրջանի ընթացքում այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար:

Ազգային ժողովը՝

<u>ա) քվեարկությամբ հաստատեց</u>

- ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը,

<u>բ) լսեց</u>

- Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության 2005 թվականի տարեկան ծրագիրը.

- ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2004թ. գործունեության մասին հաղորդումը.

- 2004թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը.

գ) փակ գաղտնի քվեարկությամբ Տիգրան Սարգսյանին նշանակեց Կենտրոնական բանկի նախագահ:

ՀՀ 2004թ. պետական բյուջեի և ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2004թ. տարեկան հաշվետվությունները քննարկվեցին և ամբողջությամբ ընդունվեցին արտահերթ նստաշրջանի ընթացքում:

Ընդունված պատգամավորական նախագծերի մեջ առավել մեծ թիվ են կազմում ՀՀ Ազգային ժողովում կոալիցիան ներկայացնող պատգամավորների (Գ. Սահակյան, Լ. Մկրտչյան, Ս. Բալասանյան) հեղինակած նախագծերը:

Ընդունված նախագծերից առանձնապես կարևոր են «Ձրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին», «Ահաբեկչության դեմ պայքարի մասին», «Աշխատանքի պետական տեսչության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» և «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման սակագների մասին» ՀՀ օրենքները:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 27 միջազգային պայմանագրեր, որոնցից 4-ը՝ իրավական բնագավառում համագործակցության մասին է, 6-ը՝ պաշտպանության, 6-ը՝ սոցիալական ոլորտին:

Նստաշրջանի ընթացքում 12 պատգամավոր գրավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: 123 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 39-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: